Լեռ Կամսար

Նամակ «Հորիզոնին»

Հարգելի խմբագրություն.

Ասկե իբր ամիս ու կես առաջ ղրկեցի ձեզ մի ֆելիետոն»Գաղթականը» վերտառությամբ: Սպասեցի որևէ լուրի, չստացա այդ լուրը, և «Գաղթականից» մի ամիս հետո բաց թողի մի երկրորդ ֆելիետոն՝ «Անվավեր մեռելներ» անունով: Գնաց «Անվավեր մեռելները» ու ալ ետ չդարձավ: Նոր այն ատեն հասկցա, որ իմ ղրկածները, երկուքն ալ նոյի ագռավներ են եղած, բայց և այնպես երրորդ անգամ հարկ չհամարեցի աղավնի մըն ալ ղրկել ագռավներուն ետևեն ինչ-ինչ պատճառներով: Բայց թողունք այդ:

Անցյալներ փոստարկղի բաժնին մեջ կարդացի պատասխան մը՝ ուղղված ձեր մեկ թղթակցին. «Ձեր հոդվածը մոլորված է զամբյուղին մեջ, շարունակեցեք գրել»... Շատ ուշագրավ պատասխան մը, որմե ինքնաբերաբար կծագի սա հարցը, թե այդ լաբիրինթոս - զամբյուղը աշխարհագրորեն ո՞ւր գետեղված է, խմբագրական սեղանին առա՞ջ, թե ետև, կամ առաքված հոդվածները նախ զամբյուղը կմտնեն նորե՞ն քննության սեղանին վրա կբարձրանան, թե՞ քննության սեղանեն զամբյուղը կերթան: Ավետարանական բարբառով ըսած, հոդվածները նախ կխոնարհի՞ն, որպեսզի բարձրանան, թե՞ կբարձրանան, որ խոնարհին: Սա պարագան յուրաքանչյուր աշխատակից գիտնալու է, վասնզի գուցե մեկ թղթակից ալ գտնվի, որ թողած իր իննսուն և ինն հոդվածները անտեր, իր մեկ մոլորյալ հոդվածին ետևեն իյնա...

Կխորհիմ, որ իմ «Գաղթականն» ալ մոլորված պետք է ըլլա նույն զամբյուղին մեջ: Այս մոլորումը հավանական կտեսնեմ անով, որ իմ առաջին հոդվածը լինելով, ձեր խմբագրատանը մեջ ճամփաներուն անտեղյակ է եղեր ու ինձ նման ամաչկոտ ըլլալով, խպնած է տեղյակ մեկե մը հարցնելու այն ճամփան, որ կտանի դեպի խմբագրին սեղանը և ասանկով զոհ է գացեր իր ամաչկոտությանը: Կամ գուցե երկար պտտելով խմբագրատանը մեջ տիրող իրարանցման ու թոհուբոհին մեջ, երբ վերջապես համոզված ըլլալով, թե այդ աղմուկին մեջ իր վրա ուշադրություն դարձնող մը չկա, հուսահատորեն ինքզնիքը զամբյուղը նետած է ու եղերական ձևով վերջ տված իր չարքաշ կյանքին:

Այս բոլորեն հետո արդյոք իրավունք ունի՞մ հարցնելու ձեր պատվարժան խմբագրութենեն, թե՝ աշխատակից մը քանի՞ ամիս սպասելու է իր հոդվածի մասին լուրի մը, որմե հետո միայն իր հույսը կտրե: Կամ ներկա դեպքում՝ քանի՞ ամիս պիտի սպասեմ, որ խմբագրությանդ կողմե հայտարարվի, թե՝ ձեր հոդվածը կորել է:

Ժամանակ մը որքան զայրացած էինք ռուս դատավորներուն դեմ, երբ 1-2 տարի մեկը բանտարկելեն հետո, հանկարծ անպարտ կարձակեին դատավարութենեն վերջը: Եվ որքան իրավունք կուտայինք այդ արձակված մարդուն պոռալու դատաստանական պալատն ի վեր՝ Է՛յ, կոսբոդին, եթե արդար պիտի ելլեի, ինչո՞ւ երկու տարի բանտարկեցիք ինձի:

Ես ալ մտադիր եմ երկու ամսեն ետքը պոռալ առ ձեր խմբագրությունը.

-Պարո՛ն խմբագիր, եթե հոդվածս կորցնելու միտք ունեիք, ինչու՞ անոր ձեր դուռնեն ներս մտնելուն պես սխալ ճամփա մը չցուցուցիք, որ առաջին օրեն իսկ «մոլորեր» ու հոդվածագրիս երկու ամիս շարունակ սրտամաշուկ չպատճառեր:

Վերջացնելով գրությունս, կպահանջեմ... չվախնաք, կաղաչեմ, զի պահանջս հաց, լույս, ազատություն լինելու չէ բնավ, այլ շատ դյուրին բավարարվելիք բաներ:

Օրինակ.

Անհապաղ տեղեկություն մը զույգ ֆելիետոններուս մասին:

Քիչ մը ավելի ուշադրություն դեպի նորընծա գրողներս, գեթ պատասխանի մը արժանացնելու չափ: Աղեկ գիտնալով, որ առանց այս տարրական պահանջներուն բավարարությանը, թղթակիցը կմեռնի ապաքեն:

1916թ.